«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Զննականության դերը գրաճանաչության նախապատրաստական շրջանում

ԱՌԱՐԿԱ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ Մարիամ Գեղամյան

ՄԱՐԶ Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Քաղսիի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գրաճանաչության նախապատրաստական շրջանի բնութագիրը 7

Գրաճանաչության ուսուցման նախաայբբենական շրջան 8

Զննականության դերը գրաճանաչության ուսուցման գործընթացում 10

Զննականության սկզբունքի կիրառումը լեզվական նախագիտելիքների ուսուցման գործընթացում 12

Եզրակացությունը 13

Գրականության ցանկ 15

Ներածություն

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի ու դպրոցի պատմությունը սկիզբ է առնում ազգային գրերի ստեղծումից և դրանց ուսուցումից: Այս առումով մանկավարժական գիտություններից ամենից հինը մայրենի

լեզվի մեթոդիկան է, իսկ նրանում էլ ամենահինը՝ գրաճանաչության բաժինը։

Այսօր մեր դպրոցներում ընդհանուր գործածության մեջ է վերլուծական-համադրական հնչույթավանկային մեթոդը, որը բավականին լավ ընդունելություն է գտել ուսուցիչների կողմից։ Այդ մեթոդներով պարապելու համար կան նոր այբբենարաններ, նոր ձեռնարկներ ու ուղեցույցներ, որոնք մեթոդիկայում իրենց արտացոլումն են գտել։

Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6-7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու բովանդակության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիարակության խնդիրների ընդգրկումով։ Այս առումով էլ գրաճանաչության մեթոդիկան հենվում է ժամանակակից մանկավարժության ու դիդակտիկայի, մանկավարժական հոգեբանության ու մարդաբանության, մայրենի լեզվի մեթոդիկայի և հայոց լեզվի գիտական հնչունաբանության վրա, որոնք նրա տեսական հիմունքներն են կազմում՝ յուրաքանչյուրը յուրովի նպաստելով գրաճանաչության ուսուցման գիտական սկզբունքների մշակմանը։

Անկասկած երախայի համար ուսումնական գործընթացը հետաքրքիր և մատչելի դարձնելուն զննականությունը անփոխարինելի դեր է կատարում մայրենիի ուսուցման բոլոր փուլերում։ Զննականության ապահովումը կարևոր է և՛ դասագրքերում նյութի մատուցման, և՛ ուսումնական գործընթացի կազմակերպման տեսանկյունից։

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել զննականության սկզբունքի գործադրության դերը և հնարավոր եղանակները մայրենի լեզվի ուսուցման գրաճանաչության փուլում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել զննականության դերը գրաճանաչության ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում՝

Ա) լեզվական նախագիտելիքների ուսուցման գործընթացում

Բ) կարդալու կարողությունների ձևավորման գործընթացում

2. Ուսումնասիրել գրաճանաչության փուլում այսօր գործադրության մեջ եղած զննական պարագաների կիրառության առանձնահատկություններն ու արդյունավետությունը:

Հետազոտության վարկածն է. գրաճանաչության ուսուցման գործընթացում զննական պարագաների նպատակային գործադրումը մեծապես կարող է նպաստել գրաճանաչության ուսուցման արդյունավետ իրականացմանը:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում զննականության սկզբունքի գործադրության նպատակների, հնարավորությունների, առանձնահատկությունների և եղանակների քննությունը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի ուսուցման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Լեզվի ուսուցման զննականությունն ապահովող միջոցները և դրանց տեսակներն ու բազմազանությունը հնարավորություն են տալիս

ուսուցչին դասի ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել դրանց վրա և օգտագործելու այդ միջոցների ընձեռած հնարավորությունները:

Գրաճանաչության նախապատրաստական շրջանի բնութագիրը

Այսօր հայ իրականության մեջ գործում են գրաճանաչության ժամանակակից՝ վերլուծական-համադրական հնչյունավանկային և վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդները:

Այս մեթոդները հայ դպրոցում գիտականորեն հիմնավորած ներդրեց պրոֆ. Ա. Տեր-Գրիգորյանը, որի ստեղծած այբբենարանները լուրջ քայլ էին հայ այբբենարանագիտության մեջ: Այս մեթոդները կոչվում են վերլուծական-համադրական, որովհետև երկուսի դեպքում էլ հնչյունային վերլուծությունը նախորդում է համադրման փուլին, սակայն երկու փուլերը սերտորեն կապված են, որովհետև նոր հնչյունի ուսումնասիրությունն իրականանում է բառի շուրջ տարվող վերլուծական և համադրական աշխատանքի միջոցով:

Գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պետք է հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիդակտիկ, այնպես էլ շարժուն խաղերին:

Գրաճանաչության ողջ գործընթացում պետք է պահպանել մանկավարժա-հոգեբանական մի քանի հիմնական պահանջներ.

- Դասի որոշակի փուլերում ուսուցիչը պետք է երեխաներին բացատրի, թե իրենք ինչ պետք է անեն այդ պահին, իսկ աշխատանքի ավարտից հետո պետք է ամփոփի՝ ինչ արեցին, ինչ սովորեցին:

- Աշակերտներին տրվող առաջադրանքները, հարցերն ու բացատրությունները պետք է ձևակերպվեն հակիրճ, հստակ, հասկանալի բառերով և ոչ երկարաշունչ նախադասություններով:

• Պետք է գերակշռեն համադասարանային, փոքր խմբերով և զույգերով աշխատանքները, որոնց ժամանակ ուսուցիչը պետք է ցույց տա իր տված առաջադրանքի կատարման նմուշները, բացատրի կատարման ընթացքը հանգամանորեն:

• Դասի ընթացքում անհրաժեշտ է մի քանի անգամ փոխել երեխաների գործունեության տեսակները:

• Դիդակտիկ նյութերը, զննական պարագաները, ուսուցման տեխնիկական մկջոցները, փոխգործուն մեթոդները, խաղային առաջադրանքները պիտի օգտագործվեն տեղին և այն չափով, որքանով որ կնպաստեն ուսուցման մատչելիությաննն ու հետաքրքրաշարժությանը՝ առանց աշակերտներին ծանրաբեռնելու և նրանց ուշադրությունը դասի հիմնական նպատակից շեղելու:

Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է 3 կետերով.

- Նախաայբբենական շրջան
-
- Այբբենական կամ գրուսուցման շրջան
-
- Հետայբբենական շրջան
-

Գրաճանաչության ուսուցման նախաայբբենական շրջան

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս, անկախ հայեցակարգային դիրքորոշումներից, գրեթե առանց բացառության

առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջանը, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլերի մանկավարժա-հոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մոթոդով նախադպրոցական տարիքի երեխայի տարիքային առանձնահատկություններով, կրթօջախի տեսակով, և կրթության այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներով:

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպական և ուսումնական: Կազմակերպական խնդիրներն են.

- Երեխաների ծանոթացում նրանց համար նոր ուսումնական գործունեությանը,
- Ծանոթություն կրթական տվյալ հաստատության կարգուկանոնին,
- Ծանոթություն երեխաների իրավունքներին ու պարտականություններին,
- Լսելու և խոսքին բարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորում,
- Գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում,
- Հարմարեցում ուսումնական գործունեությանը:

Ինչ վերաբերում է ուսումնական խնդիրներին, ապա ուսուցիչը պետք է փորձի բացահայտել երեխաների պատրաստականությունը, պարզի

յուրաքանչյուր աշակերտի խոսելու, բացատրելու, հարցեր տալու, հասկանալու և այլ ունակությունների մակարդակը:

Զննականության դերը գրաճանաչության ուսուցման գործընթացում

Մայրենի լոզվի ուսուցման գործընթացում չափազանց կարևոր տեղ ու դեր ունի զննականության սկզբունքը, որն այսօր շատ է կարևորվում: Այս հանգամանքը ամենայն հավանականությամբ պայմանավորված է այսօրվա խայտաբղետ ու հարափոփոխ իրականությամբ, որի մեջ ապրող

երեխայի գրքին, գրականությանն ու գիտելիքին կապելու համար անհրաժեշտ է ապահովել ուսումնական համանման, բազմաձև, վառ ու պատկերավոր միջավայր: Մեթոդիկայում ամենատարբեր մոտեցումներ են եղել ուսուցման գրաճանաչության անհրաժեշտության, կիրառման չափի ու դրսևորման ձևերի վերաբերյալ:

«Երբեք մի՛ սահմանափակեք զննականությունը»: Յուրաքանչյուր դաս սկսելուց առաջ ուսուցիչը պարտավոր է հիշել Պոդլասիի այս խորիմաստ խոսքերը և նախապատրաստել թեմային համապատասխան դիդակտիկ նյութեր ու պարագաներ: Գրաճանաչության ուսուցման գործընթացը բավական բարդ ու բազմաբովանդակ գործընթաց է, որի ընթացքում ձևավորվում են տարբեր կարողություններ, ձեռք բերվում տարաբնույթ գիտելիքներ:

Լեզվական նախագիտելիքների, ինչպես նաև կարդալու կարողությունների ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման, նյութի ընկալման մակարդակի բարձրացման առումով շատ կարևոր է զննականության ապահովումը: Երեխայի համար լեզվական վերացական հասկացություններն առավել շոշափելի դարձնելը, նյութի մատուցման մատչելիությունն ու զննականությունը, տրամաբանական կուռ կառուցվածքը կարող են լեզվական համակարգը սկզբից ևեթ ճիշտ ընկալել տալու և ամուր հիմք ստեղծելու համար:

Հատկապես կրտսեր տարիքի դպրոցականներին օդի և ջրի պես անհրաժեշտ է զննականությունը:

«Տեսանելին՝ տեսողությանը, լսելին՝ լսողությանը, ճանաչելին՝ ճաշակելիքին: Բայց ամեն ինչ չափի սահմաններում, ինչը կարևոր մանկավարժական արժեք է» (Կոմենսկի):

Լեզվական միավորները վերացական են, և երեխաներին դրանք ընկալելի դարձնելու համար մեթոդիկայում տարբեր միջոցներ են գործածվում, որոնց մեջ կարևորագույն տեղ է հատկացվում զննականությանը:

Գրուսուցման ժամանակ ներմուծվում է նաև կանաչ գույնը, որը դառնում է ե, ո, և երկհնչյուն և եռահնչյուն տառերի խորհրդանիշը: Այս գույները գործածվում են և՛ նախաայբբենական ծշրջանում՝ վանկերի գունավորման տեսքով, և՛ հետագայում՝ տառուսուցման ժամանակ՝ գունավոր տառերի տեսքով: Օրինակ՝ «Այբբենարանի» 4-րդ էջում պատկերված է պատմության գծապատկերը, 8-րդ էջում՝ նախադասության, բառի, 11-րդ էջում՝ վանկի, 24-րդ էջում՝ հնչյունի /ձայնավոր ու բաղաձայն/:

Զննականության սկզբունքի կիրառումը լեզվական նախագիտելիքների ուսուցման գործընթացում

Մայրենի լեզվի տարրական դասընթացը բաժանվում է երկու բաժինների՝ լեզվական նախագիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Ե՛վ նախագիտելիքները, և՛ լեզվական տարրական գիտելիքները անցնում ենք համակցված ձևով, ընթերցանության հետ համատեղ: Տեղին է նկատել պրոֆ. Ա.Ե. Տեր-Գրիգորյանը՝ ասելով.

«Մայրենի լեզվի տարրական դասընթացը քերականական նյութերը վերցնելիս աչքի առաջ է ունենում աշակերտների ընդունակություններն ու ընկալման հնարավորությունները, նրանց լեզվական պաշարը և ուսուցանելիք նյութերի գործնական արժեքը …»: Իսկ մեծանուն լեզվաբան-մեթոդիստ Ա. Բահաթրյանը գտնում էր, որ տարրական դասարաններում «քերականությունը չպիտի կազմի դասատվության նպատակ, այլ նա է և պիտի լինի միայն միջոց նպատակի, այն է՝ միջոց գրական լեզուն ճշտությամբ հասկանալու և նրա վերա տեր լինելու»:

Դեռևս առաջին դասարանում աշակերտներն ուսումնասիրում են հայերենի հնչյունաշարը (այբուբենը), տարբերակում են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոշ չափով ծանոթանում դրանց ուղղագրությանը, որն ամրապնդվում է հաջորդ դասարաններում:

Առաջին դասարանում գրաճանաչության ուսուցման նախաայբբենական փուլում, առաջին անգամ ներմուծվում են լեզվական միավորները, որոնց նյութականացման համար Ա. Տեր-Գրիգորյանը ներմուծել է գծային մոդելների կամ գծապատկերների համակարգը: Դրանց մեջ լեզվական յուրաքանչյուր միավոր՝ խոսք /կամ պատմություն/, նախադասություն, բառ, խոսքային միավոր՝ վանկ, հնչյունը՝ իր տարատեսակներով՝ ձայնավոր և բաղաձայն, ունի իր խորհրդանիշ գծապատկերը: Ընդ որում՝ վերջին երկուսի զանազանման համար ընտրվել է գունային տարբերակման եղանակը. ձայնավորի խորհրդանիշը կարմիրն է, բաղաձայնինը՝ կապույտը: Այսպիսով գույնը ևս դառնում է ուսուցման զննականություն ապահովող միջոց:

Գրուսուցման ժամանակ ներմուծվում է նաև կանաչ գույնը, որը դառնում է ե, ո, և երկհնչյուն և եռահնչյուն տառերի խորհրդանիշը: Այս մասին տեղեկություն է տրվում «Այբբենարանի» վերջում՝ «Խորհրդանիշներ» վերնագրով, և մեթոդական ուղեցույցում: Այդ գույները գործածվում են և՛ նախաայբբենական շրջանում՝ վանդակների

գունավորման տեսքով, և՛ հետագայում՝ տառուսուցման ժամանակ՝ գունավոր տառերի տեսքով: Օրինակ՝ «Այբբենարանի» 4- րդ էջում պատկերված է պատմության գծապատկերը, 8-րդ էջում՝ նախադասության, բառի, 11-րդ էջում՝ վանկի, 24-րդ էջում՝ հնչյունի (ձայնավոր և բաղաձայն):

Գծապատկերների գործածությունը ևս «Այբբենարանում» կիրառվում է շարունակաբար, հիմնականում՝

ա/ հնչյունային վերլուծության, հնչյունի տեղը բառի կամ վանկի մեջ որոշելու,

բ/ կարդալու կարողությունների ձևավորման՝ հատկապես երկար բառերը բառի վանկային կաղապարով կարդալ սովորեցնելու նպատակով:

Որպես զննականություն ապահովող միջոց հարկ է առանձնացնել նաև նկարն ու նկարազարդումը՝ թե՛ առարկայական նկարները, թե՛ նկար-նախադասությունները և թե՛ նկար-պատմությունները: Ընդ որում՝ նկարներն իրենց ուրույն դերն են կատարում և՛ լեզվական նախագիտելիքների ուսուցման, և՛ կարդալու կարողությունների ձևավորման գործընթացներում: Նկարներն «Այբբենարանում», ունեն բազմապիսի գործառույթներ.

Ա) չգրված առարկայի, գործողության, պատմության ցուցադրություն,

Բ) գրված բառի, ամբողջ բնագրի կամ բնագրի չգրված հատվածը լրացնող կտորի ցուցադրություն,

Գ) խաղի իլյուստրացիա,

Դ) ժողովրդական մանրապատում ստեղծագործության իլյուստրացի (հուշաղ, գուշակելուն կամ ընկալելուն նպաստող) և այլն:

Զննականության սկզբունքի այլ կարգի դրսևորումների կիրառումը կարդալու կարողությունների ձևավորման գործընթացում

Գրուսուցման փուլում ևս զննականությունը իր որոշակի դերն է կատարում և կարող է մեծապես նպաստել կարդալու կարողությունների ձևավորման գործընթացին: Դա կարող է լինել թե՛ գծապատկերի գործածություն, թե՛ գույնի կիրառում, թե՛ բառաշարքերում բառերի դասավորություն, թե՛ հաջորդականություն, թե՛ բառահատվածների (արմատների կամ ածանցների) թավ գրություն … Փորձենք ներկայացնել Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի «Այբբենարանում» կարդալու

կարողությունների ձևավորմանը նպաստող զննական միջոցների համակարգը, որտեղ, ինչպես դժվար չէ նկատել, զննականության բազմապիսի հնարներ են կիրառված, որոնք ուղղված են բառակազմական բաղադրիչների օգնությամբ կարդալու կարողության ձևավորմանը նպաստելուն:

Այսպիսով, զննականությունը չափազանց կարևոր դեր ունի գրաճանաչության ուսուցման գործընթացում: Ուսուցման այս փուլում զննականությունն ունի դրսևորման տարաբնույթ ձևեր, որոնցից յուրաքանչյուրը ուսուցողական այս կամ այն նպատակն ունի: Ուսուցիչը պետք է կարողանա լավ ճանաչել դասագրքում զննական միջոցների գործածության բոլոր հնարավոր ձևերը և դրանցի նպատակները, որպեսզի կարողանա անհրաժեշտ ուշադրություն դարձնել յուրաքանչյուրի վրա, երեխային ուղղորդել այդ ուղղությամբ աշխատելու և առավել արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը՝ զննական նորանոր հնարներ կամ պարագաներ ընդգրկելով ուսումնական գործընթացի մեջ:

Եզրակացություն

Ուսուցումը պետք է նաև դաստիարակող լինի և այդ կարևոր սկզբունքը հետևողականորեն պետք է պահպանվի ամբողջ գրաճանաչության ընթացքում: «Այբբենարան»-ը շատ մեծ հնարավորություններ է ստեղծում այս առումով. առաջին էջից մինչև վերջինը նյութ է տալիս դաստիարակչական աշխատանքների համար, սկսած դասարանական առողջ ու կենսունակ կոլեկտիվի ստեղծումից մինչև բարոյական, գաղափարական ու գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ յուրաքանչյուր նկար,

բառակապակցություն, նախադասություն ու փոքրիկ նյութ կարող է այդպիսի աշխատանք տանելու առիթ տալ կամ պայմաններ ստեղծել, եթե ուսուցիչը լավ գիտի իր գործը:

Մայրենի լեզվի ուսուցումը բազմակողմանի գործընթաց է, որն իր մեջ ընդգրկում է զանազան սկզբունքներ ու տարաբնույթ աշխատանքներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը: Այդ սկզբունքների մեջ իր կարևորագույն տեղն ու դերն ու զննականությունը:

Զննականության սկզբունքն այսօր բազմապիսի դրսևորումներ ունի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր արտահայտման առավել նպատակահարմար բնագավառը և կիրառության ձևը: Դրանք կարող են ձևափոխություններ կրել մատուցվող նյութով, երեխաների տարիքային առանձնահատկություններով, կիրառության տեղով, նպատակով ու խնդիրներով պայմանավորված:

Հետազոտական աշխատանքի արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացություններին.

- Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում զննականությունը անհրաժեշտություն է:

- Զննականությունը չափազանց կարևոր դեր ունի գրաճանաչության ուսուցման գործընթացում: Ուսուցիչը պետք է կարողանա լավ ճանաչել դասագրքում զննական միջոցների գործածության բոլոր հնարավոր ձևերը և նպատակները, որպեսզի կարողանա անհրաժեշտ ուշադրություն դարձնել յուրաքանչյուրի վրա, երեխային ուղղորդել այդ ուղղությամբ աշխատելու և արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը՝ զննական նորանոր հնարներ կամ պարագաներ ընդգրկելով ուսումնական գործընթացի մեջ:

- Լեզվական նախագիտելիքների ուսուցման գործընթացում զննականության սկզբունքի և զննական պարագաների կիրառումը գրաճանաչության կազմակերպման արդյունավետության կարևոր գրավականներից են նկարները, գծապատկերներն ու այլ խորհրդանիշները:

- Զննականության սկզբունքի կիրառությունը մեծապես կարող է նպաստել կարդալու սկզբնական կարողությունների ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

- Զննական պարագաները և ուսումնաօժանդակ նյութերը պետք է լինեն գրաճանաչության գործընթացի պարտադիր բաղադրիչները:

- Չպետք է չարաշահել նորագույն տեխնոլոգիաների ընդգրկումը գրաճանաչության ուսուցման գործընթացում, քանի որ առաջնայինը կենդանի շփումն է:

Գրականության ցանկ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Ուսուցիչների համար, Կրթության ինստ. Հրատ., 2004, 180 էջ:

2. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, «Զանգակ 97» հրատ ., 2009:

3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:

4. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Զանգակ 97» հրատ., 2017:

5. Տեր-Գրիգորյան Ա., Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը, Երևան, 1980:

6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:

7. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան մեթոդական ուղեցույց, Երևան, 2013, 123 էջ:

8. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013, 64 էջ:

9. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Նկարազարդ այբուբեն, Երևան, 2009, 45 էջ: